

ԱՐՎԵՍՏԸ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

«Աշխարհին ուղղված մի բացիկ եմ ես, Մի ծրարեք ինձ ու մի սոսնձեք»:
Պարույր Սևակի տողերը վերաձևակերպելով նշենք, որ Հայաստանի ազգային գրադարանի այսօրվա ցուցադրության «հերոսները» Եվրոպա աշխարհամասից աշխարհին ուղղված նամակներին են սոսնձվել երբևէ:

Եվրոպական մշակութային ժառանգության օրերի շրջանակում սեպտեմբերի 28-ին Ազգային գրադարանի Արվեստի գրականության և ոչ գրքային հրատարակությունների բաժինը Թամանյանական մասնաշենքի փոքր ցուցասրահում ցուցադրեց բաժնում պահվող ավելի քան ինը հարյուր օտար լեզվով նամականիշերից մի քանի տասնյակը. Եվրոպական՝ Վատիկանի, Սլովակիայի, Ֆրանսիայի, Բելառուսի, Իսրայելի և այլ երկրների՝ իրենց իսկ երկրի մշակութային կյանքը, պատմական իրադարձությունների դրվագները պատկերող նամականիշներ՝ գրավելով գրադարանի ֆիլատելիստ այցելուների ուշադրությունը, ոմանց էլ հիշեցնելով իրենց ֆիլատելիստական անցյալը:

Թամանյանական մասնաշենքի փոքր ցուցասրահում ցուցադրված են նաև նմուշներ ոչ գրքային հրատարակությունների ենթաբաժնի մատենանիշների հարուստ հավաքածուից, ինչպես նաև էքսլիբրիստիկային վերաբերող հայերեն և օտարալեզու գրականություն: Ցուցադրությունը բաց կլինի նաև վաղը:

Ազգային գրադարանի այցելուները գրադարանի կինոսրահում դիտեցին [Եվրոպական_երկրների_նշանավոր_արվեստագետներ](#) շարքի առաջին՝ «Վան Գոգ. հավերժական վերադարձ»՝ 2018-ին ռեժիսոր Ջուլիան Շնաբելի նկարահանած ֆիլմը՝ Ուիլեմ Դեֆոյի գլխավոր դերակատարմամբ: Շարքի ֆիլմերը կցուցադրվեն ամեն օր մինչև հոկտեմբերի 3-ը:

Եվրոպական մշակութային ժառանգության օրերի շրջանակում Ազգային գրադարանի կազմակերպած բազմաբնույթ միջոցառումների շարքում այսօր [Գրատպության թանգարան](#)ում ցուցադրվեց «Եվրոպական երկրների գրատպության թանգարանները» ֆիլմը: Նախքան ֆիլմի դիտումը այցելուներն

ունկնդրեցին թանգարանի վարիչ Բալասան Հարությունյանի՝ «Գրերի գյուտից մինչև տպագրություն» զեկույցը, շրջեցին թանգարանի սրահներում՝ ծանոթանալով հայկական գրատպության պատմությանը:





